ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 մարտի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

35
(2885)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-ԱԿԱՆ ԴԱՌՆԱԼԸ՝ ԼՈՒՐՋ ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը դիմում է ներկայացրել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանն անդամակցելու համար:

Ըստ մեր տեղեկությունների՝ Առուշ Առուշանյանի ՔՊ-ական դառնալը շատ լուրջ ճնշումների հետեւանք է, քանի որ Առուշ Առուշանյանի նկատմամբ ՔՊ-ն՝ի դեմս Նիկոլ Փաշինյանի, բազմիցս ռեպրեսիաներ է կիրառել:

Հիշեցնենք, որ 9-ամսյա կալանքից հետո Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանը 2022 թվականի մարտի 28-ին դատարանի դահլիճից ազատ արձակվեց, երբ դատավորը արդարացրեց նրան ընտրական հանցագործությունների հոդվածներով: Բանտից ազատ արձակվելուց հետո Առուշանյանը լրագրողների հետ զրույցում նշել էր, որ իրեն քաղաքական բանտարկյալ չի համարում, պայքարում է հանուն հայրենիքի, առաջին հերթին՝ «ներքին թշնամիների» դեմ: Առուշանյանը ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի ցուցակով մասնակցել էր նաեւ Ազգային ժողովի վերջին ընտրություններին, ընտրվել պատգամավոր:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Առուշ Առուշանյանի հետ, որը մեզ հորդորեց նման հարցերով իրեն չզանգել եւ չանհանգստացնել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Առուշանյանի՝ՔՊ-ական դառնալու գործում իր ներդրումն ունի նաեւ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

Հավելենք նաեւ, որ Առուշանյանը մեղադրվում էր երկու տարբեր գործերով: Այսօր նա արդարացվեց անցած տարվա խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրողներին կաշառք տալուն օժանդակելու եւ նախապատրաստելու համար: Այս գործով արդարացվեց նաեւ սկզբում նրա դեմ ցուցմունք տված, հետո դրանից հրաժարված՝ Գորիսի կազմի մեջ մտնող Քարահունջի ղեկավար Լուսինե Ավետյանը: Նա դատարանում զղջացել էր Առուշանյանի դեմ ցուցմունք տալու համար, մինչդեռ նախաքննության ընթացքում պատմել էր, թե Առուշանյանն իրեն հորդորել է «Հայաստան» դաշինքի օգտին քվեարկողներին տալ 100-220 հազար դրամ օգնություն:

Առուշանյանին վերագրվող երկրորդ քրեական գործը, որով նա մեղավոր ճանաչվեց, առնչվում է 2017 թվականին: Ըստ իրավապահների՝ Գորիսի քաղաքապետն իրեն պատկանող ընկերության միջոցով զբաղվել է ապօրինի ձեռնարկատիրությամբ եւ վնաս պատճառել շրջակա միջավայրին ու պետությանը: Բացի այդ, ըստ մեղադրանքի մեկ այլ դրվագի՝Առուշանյանը մի քաղաքացու առողջությանը դիտավորությամբ վնաս ու մարմնական վնասվածքներ է պատճառել:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը դեռ դեկտեմբերի 7-ին գրել էր, որ իշխանությունները որոշել են ձերբազատվել ընդդիմադիր բոլոր համայնքապետերից: Ինչպես հայտնի է, նախորդ տարվա վերջին ՔՊ-ն Ալավերդիում ուժով իշխանություն վերցրեց եւ պաշտոնանկ արեց համայնքապետին, որը ներկայացնում էր «Ապրելու երկիր» կուսակցությունը:

Ըստ երեւույթին, Առուշ Առուշանյանին էլ է նման բան սպառնացել, ինչի արդյունքում կուսակցությանն անդամակցելու դիմում է ներկայացրել:

25-օրյա վարժական հավաքներից խուսափածների համար նախատեսված պատիժը կխստացվի. ի՞նչ են քննարկել Պապիկյանն ու պատգամավորները:

Երեկ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը գնացել էր խորհրդարան՝ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորների հետ փակ ֆորմատով հանդիպման: «Ժողովուրդ» օրաթերթից որոշ մանրամասներ են հայտնի դարձել նախարար Պապիկյանի եւ պատգամավորների հանդիպումից: Այսպիսով, մեր տեղեկություններով՝նախարարը եւ պատգամավորները քննարկել են օրենսդրական նախագծերի փաթեթ: Բանն այն է, որ գործադիրն առաջարկում է խստացնել 25-օրյա վարժական հավաքներից խուսափածների համար նախատեսված պատիժը: Ահա այս «հույժ կարեւոր» հարցով էր Պապիկյանը հասել խորհրդարան: Գործադիրն առաջարկում է վարժական հավաքից խուսափածներին թե՛ տույժի ենթարկել, թե՛ քրեական պատասխանատվության: Քրեական պատիժը նախատեսում է 2 ամսից ընդհուպ մինչեւ 2 տարի ազատազրկում: Ինչպես մեզ փոխանցեցին, մինչ ԱԺ գալը նախագիծը նախ պետք է իրավապահ մարմինների «ձեռքի տակով» անցնի, որպեսզի հասկանան՝ արդյոք իրավական անհամապատասխանություն այնտեղ չկա: Հիշեցնենք, որ Հայաստանում նոր՝պահեստազորայինների 25-օրյա վարժական հավաքներն անցկացվում են 2024թ.-ի հունվարից. այն կտեւի մինչեւ ապրիլի 12-ը: Դրանք պարտադիր են 20-ից 55 տարեկան բոլոր պահեստազորայինների համար:

Ինչ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանը կալանքի տակ է, նրա դեմ դատարան հայցեր են ներկայացվում: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մարտի 11-ին ՀՀ վարչական դատարան ընդդեմ էկոնոմիկայի նախկին նախարար Վահան Քերոբյանի հայց է ներկայացրել Լիլիթ Հակոբյանը եւ պահանջել 08.02.2024թ. թիվ 244-Կ հրամանն անվավեր ճանաչել: Հիշեցնենք, որ էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանին «Սիներջիի» վերաբերյալ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել, եւ նա գտնվում է տնային կալանքի տակ: Նա տնային կալանքի տակ է գտնվում փետրվարի 16-ից, ու ստացվում է՝մինչ այդ՝փետրվարի 8-ին, կայացրել է մեկ որոշում, որի դեմ էլ բողոք է ներկայացրել քաղաքացին: Բանն այն է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայության ձեռք բերման մրցույթի ընթացքում կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ: Մասնավորապես, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել մրցույթի պայմանները, ընդհուպ նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝հնարավորություն տալով նրան հեռացնել մրցույթից: Սույն քրեական գործով մեղադրյալ են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝Անի Գեւորգյանը, «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը եւ այլ անձինք:

«Հայաստանում հիմա չկա կոռուպցիա. ես կարող եմ դա ասել, քանի որ այժմ Հայաստանում հակակոռուպցիոն մթնոլորտ է»,- 2018թ.-ին՝իշխանության գալուց անմիջապես հետո, ռուսական լրատվամիջոցներից մեկին տված իր հարցազրույցում նման բարձրագոչ հայտարարություն էր արել Նիկոլ Փաշինյանը: Արդեն տարիներ անց՝հենց իր թիմակիցների մասնակցությամբ տեղի ունեցած կոռուպցիոն աղմկահարույց բացահայտումներից հետո, Փաշինյանն ուղղել էր ինքն իրեն՝ կոնկրետացնելով, թե Հայաստանում համակարգային բնույթի կոռուպցիա չկա: Այս մասին էլ նա հայտարարել էր 2023թ.-ի մարտին տված իր ասուլիսում: Իսկ ի՞նչ են ասում փաստերը: Չնայած Փաշինյանը տորպեդահարում է հանրությանը կոռուպցիան արմատախիլ անելու իր թեզով, բայց միջազգային տարբեր կազմակերպությունների հրապարակած տվյալները, ինչպես նաեւ մամուլում տեղ գտած հրապարակումները հակառակն են փաստում. թավշյահեղափոխականների օրոք կոռուպցիան ոչ միայն արմատախիլ չի արվել, այլ նաեւ սահուն կերպով ծաղկում է: Այսպիսով, Հայաստանը, ըստ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության հրապարակած՝«Կոռուպցիայի ընկալումների» 2023 թվականի վարկանիշի, 180 երկրի շարքում 47 միավորով զբաղեցրել է 62-րդ տեղը՝2022թ.-ի համեմատ բարելավելով իր դիրքը մեկ հորիզոնականով: Հայաստանում կոռուպցիոն զարգացման փաստող ամենաթարմ օրինակը «Սիվիլնեթ»-ի եւ OCCRP-ի հետաքննության բացահայտումն էր, որը վերաբերում էր «Քաղաքացիական պայմանագրի»՝2022թ.-ի նվիրատվությունների թեմային: Հրապարակման համաձայն՝2022թ.-ին ՔՊ-ին միլիոնավոր դրամների փոխանցում կատարած տասնյակ անձինք պնդել են, որ իրենք ոչ մի նվիրատվություն էլ չեն կատարել: Որոշ նվիրատուների գույքի ու եկամուտների հայտարարագրի գումարներն էլ չէին բավականացնում նման հանգանակության համար: Այսինքն՝ՔՊ փոխանցումներն անհայտ աղբյուրներից են արվել:



ԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆՃՌՈՆԻ ՍՈՒՆԿՆ ԵՆՔ ԱՃԵՑՆՈՒՄ»

Հայաստանում առողջության համապարփակ ապահովագրության ներդրումից հետո կառավարությունն ամբողջությամբ կսուբսիդավորի մինչեւ 18 տարեկան երեխաների, 63 ու դրանից բարձր տարիքի անձանց, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց ապահովագրավճարները: Բացի դա, կառավարությունը պատրաստակամ է նաեւ մասնակի սուբսիդավորել ամսական մինչեւ նվազագույն աշխատավարձի քառապատիկը եկամուտ ունեցող անձանց, գյուղացիական տնտեսությունում զբաղվածների, վերջիններիս փոխկապակցված անձանց ապահովագրավճարները:

ArmLur.am-ը առողջապահական ապահովագրական մանրամասների մասին զրուցել է «Առողջության իրավունք» ՀԿ համանախագահ Ծաղիկ Վարդանյանի հետ, որը մեզ հետ զրույցում նշել է, թե ինչ ռիսկեր եւ բացեր կան առողջապահական ապահովագրության ներդրված համակարգում: Նա նշեց, որ ինչ էլ փոխեն եւ «բարելավեն», միեւնույնն է, համակարգը թույլ է, եւ մարդիկ կվճարեն ապահովագրության համար, սակայն կրկին կշարունակեն կամ հերթ կանգնել, կամ օգտվել վճարովի տարբերակից:

-Տիկի՛ն Վարդանյան, Դուք ուսումնասիրում եք առողջապահական ապահովագրության հետ կապված խնդիրները, դրանց բացթողումները: Կարո՞ղ եք ներկայացնել առողջապահական ապահովագրության մանրամասները, որոնք պետք է քաղաքացիներն իմանան, բայց նախարարությունը չակերտները չի բացում:

-Առողջապահական ապահովագրությունը ֆինանսական փոխհատուցման փոփոխություն է. սա ֆինանսական բարեփոխում է: Տրամաբանությունը հետեւյալն է. 100 կամ 200 հազար մարդիկ գումար են վճարելու անընդհատական՝յուրաքանչյուր ամիս կամ տարվա կտրվածքով, բայց օգտվելու են այդ ծառայություններից վճարում իրականացրած մարդկանց 10 տոկոսից ոչ ավելին: Սա շատ լավ մեթոդ է ֆինանսական փոխհատուցման: Նրանք, ովքեր աշխատում են, անգամ եթե ունեն սոցապահովագրություն կամ այլ երաշխիք, իրենք գումար են վճարելու. այս պահին նախատեսված է 164 000 դրամ: Լրացուցիչ բոլորը պարտադիր ապահովագրավճար են տալու, մեր աշխատավարձից այդ չափով գումար է գործատուն պահելու: Երկրորդը, որ պետք է իմանալ, այն է, որ ողջ պետպատվերը աշխատողը փոխհատուցելու է իր համար, այսինքն՝պետական պատվեր հասկացությունը վերանում է, իսկ այն մարդիկ, որոնք դրա հնարավորությունը չունեն, կամ հատուկ խմբեր են, նրանց հոգսը վերցնում է պետությունը: Պետությունը վերցնում է մինչեւ 18 տարեկան երեխաների, զինծառայող ընտանիքի անդամների, ֆունկցիոնալության սահմանափակություն ունեցողների ապահովագրավճարի փոխհատուցումը: Աշխատող մարդու վրա է լինելու լրացուցիչ ֆինանսական բեռ: Բացի այդ, այն մեխանիզմները, որոնք այսօր պետք է իրականացվեն, մեծ պետպատվեր է, ոչ թե ապահովագրություն, որովհետեւ այս ծավալի եւ այս չափի ծառայությունների մատուցումը, այնուամենայնիվ, մեզ զերծ չի պահելու հերթագրումներից, մեզ զերծ չի պահելու տարբեր կոռուպցիոն ռիսկերից եւ չի տալու այն մակարդակի որակյալ բուժօգնությունը, որը մենք ցանկանում ենք: Ստիպված խնդիրների դեպքում մենք դիմելու ենք վճարովի ծառայությունների:

-Ստացվում է՝ կրկնակի՞ ենք վճարելու:

-Իհարկե, գումարած դրան՝ ուզում եմ ասել, որ թերապեւտիկ բուժօգնությունը, խրոնիկ հիվանդությունների սրացման վիճակները չեն փոխհատուցվելու, այսինքն՝ ծավալը համարյա պետպատվերի չափով է լինելու, մի փոքր՝ քիմեոթերապիա կավելանա, հետեւաբար ստեղծվելու է մի հատ նոր հիմնադրամ, անունը՝ Առողջապահական ապահովագրության հիմնադրամ, նոր կառույց է լինելու, որը չի ենթարկվելու լիցենզավորված ապահովագրական կազմակերպությունների չափանիշներին. այն իր մասին նոր օրենքով է սահմանվելու: Ստացվում է՝ մենք հերթական անճռոնի սունկն ենք աճեցնում մեր դաշտում, եւ նման չէ ոչ մեկին, չգիտեմ՝ինչու. եթե մենք արդեն ունենք առողջապահական ապահովագրության շուկա, եթե մենք ունենք կամավոր բժշկական ապահովագրության՝մոտավոր 27-28 միլիարդի ծառայություններ, եթե մենք ունենք սոցփաթեթի ապահովագրություն, ինչո՞ւ չեն սրանք զարգացնում, այլ բոլորը կողք են դնում, սկսում են նորից:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՓԱՍՏԵՐԻ ՃՆՇՄԱՄԲ

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՐԿԱԾՆԵՐ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

ArmLur.am-ին արցախցիները ուշագրավ տեղեկություններ են ներկայացրել Արցախի նախագահի Սամվել Շահրամանյանի վերաբերյալ:

Ըստ մեր զրուցակիցների՝ վերջինս անգործունյա է ցուցաբերում եւ բացարձակապես չի զբաղվում արցախցիների խնդիրներով, մինչդեռ լավ էլ ակտիվ ու գործունյա էր, երբ հարցը վերաբերում էր իրեն: Եվ այսպես, վերջիններիս պնդմամբ, երբ Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը հանդիսանում էր Արցախի ազգային անվտանգության ծառայության ղեկավարը, 2019թ. մարտի 13-ին Արցախի պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանի որոշմամբ Ստեփանակերտ քաղաքի Կնունյանցների փողոցի 1/61 շենքի թիվ 30 բնակարանը նվիրատվության կարգով տրվել էր Հայաստանի Հանրապետությունից Արցախի ազգային անվտանգության ծառայություն տեղափոխված Աշոտ Սերգեյի Առուշանյանին: Դրանից ընդամենը մի քանի ամիս անց Աշոտ Առուշանյանը այդ տունը իբր վաճառել է Էլենորա Շահրամանյանին. վերջինս հանդիսանում է Սամվել Շահրամանյանի մայրը: 44-օրյա պատերազմից հետո՝2021թ., Ս. Շահրամանյանի մայրն այդ բնակարանը վաճառել է Արցախի ներդրումային հիմնադրամին եւ դրա դիմաց ստացել 25.000.000 դրամ: Մեր զրուցակիցների պնդմամբ՝ ահա սրանով են եղել զբաղված 44-օրյա պատերազմից հետո Արցախում պաշտոն զբաղեցնողները եւ Արցախը Ադրբեջանին հանձնելուց


ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ք. Ստեփանակերտ, Անդրանիկի փող. 21
հեռ. (374 47) 94-41-26

REPUBLIC OF ARTSAKH
Stepanakert, Andranik str. 21
Tel: (37447) 94-41-26

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
THE DIRECTOR OF NATIONAL SECURITY SERVICE

№ 229 «27» 03 2019թ.

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ԱՀ Ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս տնօրեն՝ Սամվել Սերգեյի Շահրամանյանի, ԱՀ կառավարության 2019թ. մարտի 13-ի թիվ 150-Ա որոշման հա[illegible]ձայն, լիազորում [illegible] Էդուարդ Գերմանի Պետրոսյանին (անձնագիր AS0466045, [illegible]) ԱՀ կառավարության աշխատակազմի [illegible] հանդես գալ, որպես ԱՀ ԱԱԾ լիազոր ներկայացուցիչ և կատարել գույքի օտարման, կադաստրային գրանցման հետ կապված աշխատանքները, ստորագրել և կնքել անհրաժեշտ փաստաթղթերը:

Լիազորագիրը ուժի մեջ է մինչև 30.04.2019թ.

ԳՆԴԱՊԵՏ Ս.Ս.ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

հետո Հայաստանում որպես «սրբեր» ներկայացողները:

Մեր զրուցակիցների պնդմամբ՝ Արցախում գրեթե բոլորը ճանաչում են ժամանակին բիզնեսով զբաղվող Արամ Խաչատրյանին (Ախթամարի Արամ), ում հարյուրավոր միլիոնների հասնող ունեցվածքը Բակո Սահակյանի կառավարման ժամանակ ամբողջությամբ բռնագրավվել էր պետության կողմից: Երբ Սամվել Շահրամանյանը հանդիսանում էր Արցախում դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ղեկավարը, նրա պաշտոնավարման ժամանակ Արամ Խաչատրյանի կատարողական վարույթի նյութերը անհետացել են, իսկ հետագայում հայտարարեցին, որ դրանք կորել են: Թե ուր են կորել եւ ում հեղինակությամբ, այդպես էլ մնաց անհայտ, ու այդ ամենի համար ոչ ոք պատասխանատվության չկանչվեց:

Արցախցիներից որոշներն էլ դժգոհեցին 2023թ. սեպտեմբերի 25-ին Արցախում բենզինի տարաների պայթյունի պատասխանատուներին առ այսօր պատասխանատվության չկանչելու համար: Թեեւ Սամվել Շահրամանյանը հայտարարել էր, որ բենզինի պահեստը գտնվում էր ՊԲ ենթակայության տակ, սակայն բազմաթիվ զինվորականներ պնդում են, որ այն դեպքից օրեր առաջ հանձնվել էր Արցախի կառավարությանը. նման տեղեկություններ ունեն նաեւ ՀՀ իրավապահ մարմինները: Մեր զրուցակիցները բավականին բացասական արտահայտվեցին նաեւ վերջերս Սամվել Շահրամանյանի կողմից Արցախի պետական նախարար նշանակված Արամ Սարգսյանի վերաբերյալ՝ խոստանալով նրա կերպարի ու կոռուպցիոն արկածների մասին ներկայացնել բազմաթիվ փաստեր:

Ի դեպ, Armlur.am-ի աղբյուրները փոխանցել են Արցախի կառավարության 2019թ. որոշման, ինչպես նաեւ պայմանագրերը, որոնք ամբողջությամբ հաստատում են մեր զրուցակիցների ներկայացրած տեղեկությունները: Հատկանշական է, որ հիշյալ տեղեկությունները ամբողջությամբ գտնվում են ՀՀ համապատասխան պետական մարմինների տիրապետության տակ եւ հարկ եղած դեպքում կարող են ստուգվել նրանց կողմից:

Փաստաթղթերն ամբողջությամբ՝
ArmLur.am կայքում
ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվիրակությունը Գերմանիա կատարած այցի շրջանակում հանդիպումներ է ունեցել Համբուրգի գործարար հարաբերություններում դերակատարություն ունեցող կառույցների ներկայացուցիչների հետ:

ՀՀ ԱԺ մամուլի ծառայությունից տեղեկացնում են, որ Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային լոգիստիկ խնդիրների ուսումնասիրությունն առանցքային է դարձել Համբուրգի նավահանգստային խորհրդատվական ընկերության տնօրենի տեղակալ Ֆրանկ Բուսեի հետ հանդիպման ընթացքում:

Հանդիպման մասնակիցներն ընդգծել են Հայաստանի լոգիստիկ զարգացման հեռանկարում Համբուրգի՝ որպես Գերմանիայի եւ ամբողջ Հյուսիսային Եվրոպայի տնտեսական, լոգիստիկ եւ նավահանգստային նշանակալի հանգույցի փորձառության կարեւորությունը:

Այնուհետեւ Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակությունը հյուրընկալվել է Համբուրգի առեւտրի պալատում, որտեղ տեղի է ունեցել հանդիպում Առեւտրային պալատի ռազմավարության եւ միջազգային հարաբերությունների դեպարտամենտի տնօրեն Ֆիլիպ Կոխի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ կապերի ամրապնդման համար ուղիների որոնման եւ օրենսդրական բարենպաստ դաշտ ձեւավորելու հնարավորությունները:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է

Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան մարտի 13-ին ճեպազրույցում պատասխանել է այն հարցին, թե ինչպես է Մոսկվան գնահատում «Զվարթնոց» օդանավակայանից ռուս սահմանապահներին դուրս բերելու Երեւանի որոշումը:

«Մենք իսկապես տեսել ենք Հայաստանի ղեկավարության մեկնաբանությունները այս թեմայով: Ինչպես հասկանում ենք, համապատասխան ծանուցումն ուղարկվել է գերատեսչական գծով: Մենք դիվանագիտական ուղիներով ոչինչ չենք ստացել: Մենք ելնում ենք նրանից, որ բոլոր որոշումները կկայացվեն միջգերատեսչական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա»,- ասել է Մարիա Զախարովան:

Միաժամանակ նա նշել է, որ նշված հայտարարությունը հայկական կողմից արվել է «պաշտոնական Երեւանի մի շարք ոչ բարեկամական քայլերի եւ հայտարարությունների ֆոնին»:

«Քիչ հավանական է, որ նման նախաձեռնությունը համապատասխանի Հայաստանի եւ նրա քաղաքացիների անվտանգությանը՝ հատկապես հաշվի առնելով այն խնդիրները, որ ռուս եւ հայ սահմանապահները երկար տարիներ արդյունավետ աշխատում են՝ ուս ուսի տված»,- հավելել է Ռուսաստանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը:

ՄՏՔԵՐ ԵՆ ՓՈԽԱՆԱԿԵԼ

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը մարտի 13-ին ընդունել է ԱՄՆ պետական դեպարտամենտի Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական Լուիս Բոնոյին:

Հայաստանի Հանրապետության ԱԳՆ-ից հայտնում են, որ զրուցակիցները քննարկել են Հարավային Կովկասում անվտանգային իրավիճակին վերաբերող հարցեր:

Անդրադարձ է կատարվել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացին, այդ թվում՝ խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումներին: Նախարար Միրզոյանը զրուցակցին է ներկայացրել վերջին զարգացումները՝ ընդգծելով ՀՀ դիրքորոշումներն առանցքային հարցերի շուրջ: Մասնավորապես, շեշտվել է 1991 թվականին Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչմանը հավատարմության եւ սահմանազատման հետագա գործընթացն Ալմա-Աթայի հռչակագրի, ամուր իրավական հիմքեր ունեցող քարտեզների հիման վրա իրականացնելու կարեւորությունը: Տարածաշրջանային կապուղիների ապաշրջափակման համատեքստում նախարար Միրզոյանը վերահաստատել է գործընթացը հանրաճանաչ սկզբունքների՝ ինքնիշխանության, իրավազորության, փոխադարձության ու հավասարության հիման վրա կյանքի կոչելու հարցում Հայաստանի Հանրապետության հետեւողական մոտեցումը:

Արարատ Միրզոյանը եւ Լուիս Բոնոն մտքեր են փոխանակել նաեւ ՀՀ-ԱՄՆ երկկողմ քաղաքական երկխոսության օրակարգի, առաջիկա միջոցառումների եւ գործընկերության հետագա զարգացման հարցերի շուրջ:

ԱՌԿԱ Է ՄԵԾ ՆԵՐՈՒԺ

Երեւանի եւ Թբիլիսիի միջեւ գործակցության ընդլայնմանն առնչվող հարցեր են քննարկվել Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի ու Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեի հանդիպման ժամանակ:

Քաղաքապետարանից հայտնում են, որ կողմերը բարձր են գնահատել երկու մայրաքաղաքների միջեւ հաստատված փոխգործակցությունը, իրականացվող փորձի փոխանակման ծրագրերն ու ընդգծել, որ առկա է մեծ ներուժ՝ նոր ուղղություններ ու ոլորտներ ընդգրկելու համար:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության ու համագործակցությունն ընդլայնելու պատրաստակամության համար՝ դեսպան Գիորգի Շարվաշիձեն նշել է, որ իր լիազորությունների շրջանակում պատրաստակամ է աջակցելու եւ օժանդակելու երկուստեք կապերի խորացման բոլոր նախաձեռնություններին եւ ծրագրերին:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է

ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ՝ ԴԵՍՊԱՆՆԵՐ

2019-ի մայիսի 8-ին կայացած մամուլի ասուլիսում Նիկոլ Փաշինյանը ներկայացրեց «100 փաստ Նոր Հայաստանի մասին», որի 69-րդ կետը հետեւյալն էր. «Փոխվել է դեսպաններ նշանակելու մոտեցումը: Վերջին մեկ տարվա ընթացքում դիվանագիտական համակարգում ոչ մի քաղաքական նշանակում չի արվել, եւ դեսպանների պաշտոնում նշանակվել են միայն պրոֆեսիոնալ դիվանագետներ՝ հիմնականում պահպանելով ռոտացիայի սկզբունքը:

Սա, իհարկե, չի նշանակում, որ տեսականորեն բացառվում են քաղաքական նշանակումները դեսպանների պաշտոնում, բայց դրանք միջազգայնորեն ընդունված շրջանակներից երբեք դուրս չեն գա»: Իրականում Նիկոլ Փաշինյանը կարեւորագույն նշանակություն ունեցող երկրներում նշանակել է բացառապես իր թիմակիցներին, որոնք չունեն դիվանագիտական կրթություն: ԱՄՆ-ում ՀՀ դեսպան է ՔՊ-ական, Նիկոլ Փաշինյանի անգլերենի ուսուցիչ Լիլիթ Մակունցը (ավարտել է ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը), Գերմանիայում դեսպան է ՔՊ-ական, նախկին պատգամավոր, գերմաներենին տիրապետող Վիկտոր Ենգիբարյանը, Իսպանիայում դեսպան է մեկ այլ ՔՊ-ական նախկին պատգամավոր, իսպաներենին տիրապետող Սոս Հակոբյանը, Ռուսաստանի Դաշնությունում՝ մի քանի ամիս պաշտպանության նախարար աշխատած Վաղարշակ Հարությունյանը, եւ այլն: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ Հայաստանի անկախ Հանրապետության դիվանագիտական պատմության մեջ 2023 թ. դեկտեմբերին տեղի ունեցավ աննախադեպ դեպք՝ Հայաստանի քաղաքներից մեկում կոալիցիոն կառավարումը խզելու պատճառով, նեղ քաղաքական խնդիրներից ելնելով, պաշտոնանկ արվեց դեսպան: Մասնավորապես՝2023թ. դեկտեմբերի 29-ին ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը հրամանագիր ստորագրեց, որով Միսակ Բալասանյանը հետ կանչվեց Իրաքում ՀՀ դեսպանի պաշտոնից: Միսակ Բալասանյանն Իրաքում դեսպան էր նշանակվել 2023թ. սեպտեմբերին: Նա Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի որդին է: ՏԻՄ ընտրություններից հետո «Բալասանյան» դաշինքը հաղթող էր ճանաչվել Գյումրիում: Նրանք կոալիցիոն հուշագիր ունեին «Քաղաքացիական պայմանագրի» հետ, բայց 2023 թվականի դեկտեմբերին ՔՊ-ն խզեց հուշագիրը, որից հետո Սամվել Բալասանյանի որդին հետ կանչվեց դեսպանի պաշտոնից: Իհարկե, Միսակ Բալասանյանը եւս կադրային դիվանագետ չէր եւ նշանակվել էր ՔՊ-ի քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված միայն:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ԺՆԵՎ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 22-25-ը կգործուղվի Ժնեւ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատվիրակությունը մասնակցելու է Միջխորհրդարանական միության 148-րդ վեհաժողովին:

ՀՀ Ազգային ժողովի պատվիրակության կազմում լինելու են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը, ՔՊ-ականներ Հասմիկ Հակոբյանը, Արսեն Թորոսյանը, Ծովինար Վարդանյանը եւ «Հայաստան» խմբակցությունից Լեւոն Քոչարյանը:

ԱԺ պատվիրակության գործուղման ճանապարհածախսը, օրապահիկը եւ ներկայացուցչական այլ ծախսեր կհրականացվեն պետական բյուջեի հաշվին:

ԳՆԱԼՈՒ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՀՀ արտգործնախարար Արարատ Միրզոյանը մարտի 15-ին՝ ուրբաթ օրը, գնալու է խորհրդարան:

ArmLur.am-ը Ազգային ժողովից տեղեկացավ, որ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նիստում արտգործնախարարը ներկայացնելու է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի՝ արտաքին քաղաքականության հատվածը:

Նշենք, որ արդեն հաջորդ շաբաթ Նիկոլ Փաշինյանն է գնալու խորհրդարան՝ ԱԺ նիստին ՀՀ կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը ներկայացնելու:

ՄՈՍԿՎԱՆ ՏԵՂՅԱԿ Է

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը նշել է, որ Մոսկվան տեղյակ է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից արված այն հայտարարությանը, որ Հայաստանը, հնարավոր է, դուրս գա Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից:

Այս մասին հայտնում է ՏԱՍՍ-ը՝ մեջբերելով Պեսկովի խոսքերը:

«Իհարկե, մենք լսել ենք այս հայտարարությունները: Առջեւում, բնականաբար, շատ աշխատանք է սպասվում: Մեզ անհրաժեշտ են շփումներ մեր հայ գործընկերների հետ ինչպես ՀԱՊԿ-ի շրջանակներում, այնպես էլ երկկողմ մակարդակով: Կպարզաբանենք ու կխոսենք պարոն վարչապետի (ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան) հայտարարություններին համահունչ»,-ասել է խոսնակն՝ ի պատասխան Նիկոլ Փաշինյանի՝ ՀԱՊԿ-ից դուրս գալու մասին նախօրեին արված հայտարարություններին:

Դմիտրի Պեսկովը հավելել է, որ Մոսկվան կշարունակի կապերը Երեւանի հետ եւ կպարզաբանի իրավիճակը ՀԱՊԿ-ի՝ Հայաստանի շարունակական անդամակցության հարցում:

ՓԱԼՈՆԸ ՄԻԱՆՈՒՄ Է

Ամերիկայի Միացյալ Նահանգների կոնգրեսական Ֆրենկ Փալոնը հայտնում է, որ միանում է Ամերիկայի հայ դատի հանձնախմբին (ANCA) եւ մարդու իրավունքների պաշտպաններին, որոնք կոչ են անում Միացյալ նահանգներին պատասխանատվության ենթարկել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ իրականացված ցեղասպան քաղաքականության համար:

ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ Ֆրենկ Փալոնն այս մասին գրառում է կատարել X-ի իր միկրոբլոգում:

«Միանում եմ ANCA-ին եւ մարդու իրավունքների պաշտպաններին, որոնք ԱՄՆ-ին կոչ են անում Ալիեւին պատասխանատվության ենթարկել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ ցեղասպանական քաղաքականության համար: Վաղուց արդեն ժամանակն է, որ Կոնգրեսը քայլեր ձեռնարկի՝ նրա (Ալիեւի) նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու եւ Ադրբեջանին անվտանգության ոլորտում հետագա ցանկացած աջակցություն կանխարգելելու ուղղությամբ», -գրել է կոնգրեսականը:

ԱՐԴԻԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԵՎՈՐ

ԻՐԱՋԵԿՈՂ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչ է իրենից ներկայացնում «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը, ի՞նչ ռիսկեր է այն պարունակում բիզնեսի համար, ո՞ւմ կարող է այն վերաբերել, ի՞նչ օրենսդրական լուծումներ կան. այս եւ այլ հարցերի շուրջ երեկ հերթական քննարկումն էր կազմակերպվել «Մանթաշյանց» բիզնես ակումբում:

Բանախոսները «Էմ Ջի Էմ Փարտներս» ընկերության տնօրեն Մուշեղ Խաչիկյանը եւ ընկերության իրավական հարցերով փորձագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Գեւորգ Դանիելյանն էին: Քննարկվող թեման արդիական եւ կարեւոր էր գործարարների համար, թերեւս դրանով է պայմանավորված, որ ակումբի անդամները բազում հարցեր ուղղեցին բանախոսներին, քննարկեցին կոնկրետ դեպքեր, իրավիճակներ, լուծումներ: «Էմ Ջի Էմ Փարտներս» ընկերության տնօրեն, փաստաբան Մուշեղ Խաչիկյանը մեզ հետ զրույցում ասաց, որ 5 ամսվա անդամակցության ընթացքում սա երկրորդ սեմինարն է «Մանթաշյանց» ակումբի անդամների համար, որի նպատակը գործարարներին առկա օրենսդրական կարգավորումների մասին իրազեկելն է: Առաջին նման քննարկումը վերաբերում էր սնանկության վարույթին, երեկ կայացած քննարկումը «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի առանձնահատկությունների մասին էր, իսկ երրորդ քննարկումը հավանաբար կկայանա ապրիլի վերջին, այն նորից կլինի սնանկության վարույթի մասին՝ հաշվի առնելով վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունները: Փաստաբանը շատ արդյունավետ է համարում նման քննարկումները, գործարարները բավականին հետաքրքրված են եւ ակտիվորեն մասնակցում են նման ձեւաչափով հանդիպումներին: Ընկերության իրավական հարցերով փորձագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Գեւորգ Դանիելյանը նշեց, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը վիճահարույց է օրենսդրական լուծումների տեսանկյունից, օրենքի հիմնավորումները համարժեք չեն օրենսդրական լուծումներին, օրինակ՝ հիմնավորումներով արտացոլված է հանցագործությունների դեմ պայքարի խնդիրը, մինչդեռ օրենսդրական լուծումները նախատեսում են վարույթ նախաձեռնելու հիմքեր, որոնք որեւէ աղերս չունեն հանցագործությունների հետ ընդհանրապես: ՀՀ վաստակավոր իրավաբանը շեշտեց, որ այլ նպատակներով եւ այլ հիմքերով այս ինստիտուտի կիրառումը ոչ միայն չի բխում Սահմանադրությունից, այլեւ միջազգային իրավանորմերից: Պրոֆեսորը մտահոգիչ համարեց այն, որ օրենսդրությունը բացառում է ընթացակարգային կանոնների խախտումների որեւէ իրական հետեւանք, այսինքն՝ խնդիրն այն է, որ կոնկրետ քննակվող օրենքը որեւէ հետեւանք չի նախատեսում, իսկ մյուս օրենքները հետեւանքներ են նախատեսում միայն խիստ սահմանափակ խախտումների համար:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ» ՀԵՏ ԵՆ ԿԱՊՈՒՄ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ՔՊ գրասենյակի եւ ԱԺ պատգամավոր Գուրգեն Արսենյանի գրասենյակի դիմաց պայթուցիկ տեղադրելու դեպքով անձինք են ձերբակալվել:

Իրավապահ համակարգում պայթուցիկի տեղադրումը «Դաշնակցության» անդամների անվան հետ են կապում:

Չի բացառվում, որ այս դեպքերը կապ ունեն միմյանց հետ:

Նշենք, որ երեկ ԱԱԾ հատուկջոկատայինները վաղ առավոտյան ներխուժել են ՀՅԴ անդամ Գագիկ Սարգսյանի տուն եւ բերման ենթարկել նրան:

Այս մասին հայտնել է վերջինիս որդին՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աշխատակից Արամ Սարգսյանը:

«Ընկերներ՛ջան, արտառոց դեպքի առիթով եմ գրում: Առավոտից էնպիսի մղձավանջի մեջ ենք ամբողջ տնով, որ ամենավատ երազում չէի կարող պատկերացնել: Առավոտյան ժամը 7-ին ամենավայրի ձեւով մեր տուն են ներխուժել ԱԱԾ հատուկջոկատայինները՝ մինչեւ– ատամները զինված: Բոլորիս պառկեցրել են գետնին, բոլորիս տեռորի են ենթարկել, ինձ հարվածել են, խեղճ մորս լեղաճաք են արել, էնպես էին վախեցրել: Ամբողջ տունը խուզարկել, տակնուվրա են արել, մի քանի ժամ տեւած քննչական գործողություններից հետո հորս՝ դաշնակցական Գագիկ Սարգսյանին, բերման են ենթարկել: Հիմա չգիտենք՝ որտեղ է, ինչ վիճակում է: Հայրս ազնիվ, պարկեշտ, բացառիկ հայրենասեր մարդ է: Ով նրան ճանաչում է, լավ գիտի: Առայժմ ոչինչ պատճառների մասին չեն ասել, բայց վստահ եմ, որ իր ընդդիմադիր քաղաքական հայացքների ու քաղաքական ակտիվության հետ է կապված:

Չգիտեմ՝ ինչ էինք արել, որ մեր հայրենի պետության «ժողովրդավար» իշխանությունները մեզ վերաբերվում են որպես ամենավտանգավոր հանցագործի. նույնիսկ Նաիրի Հունանյանի հետեւից էդպես չեն գնացել, բայց առայժմ էս հարցը մի կողմ եմ դնում:

Հիմա ավելի կարեւոր են գործնական քայլերը: Չգիտեմ՝ ինչ կարելի է անել նման իրավիճակում: Եթե ընկերներիս մեջ որեւէ մեկը իրավաբանական, փաստաբանական կամ այլ օգնություն կարող է ցույց տալ, ինչ-որ խորհուրդ կարող է տալ, խնդրում եմ գրել»:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Մարտի 12-ին՝ ժամը 12.22-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում էր ստացվել, որ շտապօգնության խումբը Երեւանի Մամիկոնյաց փողոցի բուժօգնության է տեղափոխել դանակահարված, 2006 թ. ծնված Ռ. Հ.-ին, որը, գիտակցության չգալով, մահացել է:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ մարտի 12-ի ժամը 11.30-ին Ռ. Հ.-ն Մամիկոնյանց փողոցի քոլեջի մոտ վիճաբանել է 21-ամյա մի երիտասարդի եւ չպարզված մի խումբ անձանց հետ, որոնք ոտքերով, ձեռքերով, մահակներով հարվածներ են հասցրել Ռ. Հ.-ի մարմնի տարբեր մասերին, այդ ընթացքում էլ 21-ամյա երիտասարդը սուր կտրող-ծակող առարկայով հարվածներ էր հասցրել Ռ. Հ.-ի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մահ:

ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ, Երեւան քաղաքի վարչության, Արաբկիրի եւ Սիսիանի բաժինների քրեական հետախույզների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում մարտի 13-ի ժամը 12-ի սահմաններում 21-ամյա երիտասարդը Սիսիան քաղաքում հայտաբերվել եւ քննության ներկայացնելու նպատակով ձերբակալվել է:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ վիճաբանության մյուս մասնակիցներին հայտնաբերելու եւ քննության ներկայացնելու ուղղությամբ:

Էջի նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ԾԵԾԵԼ ԵՆ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Տաշիր քաղաքի ռազմական ոստիկանապետը ծեծի է ենթարկել Արցախի քաղաքացի Ժորա Սաֆարյանին, որը ունեցել է ՊԲ մեքենա, որի առգրավվելու շուրջ իրավապահ մարմինները գործընթաց են սկսել: Ըստ էության, Ժորա Սաֆարյանը հրաժարվել է իր մեքենան հանձնել, որից հետո վիճաբանություն է սկսվել, ու քաղաքացուն ծեծել են:

Ոստիկանության բաժնում եւս Ժորա Սաֆարյանին խոշտանգման են ենթարկել: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ նրան անգիտակից տեղափոխել են Տաշիրի հիվանդանոց: Բժիշկները պայքարում են նրա կյանքը փրկելու համար:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն Արցախի կառավարության միջոցներով ձեռք բերված ՊԲ մեքենաներն առգրավելու գործընթաց է սկսել:

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ ՊԲ մեքենաների մասով քրեական վարույթ կա նախաձեռնված յուրացման մասով, սակայն ուշագրավն այն է, որ զինվորականներից շատերը դիմել են դատարան, ու դատարանը որոշում ունի կայացրած՝ որեւէ մեկը չի կարող արցախցուն զրկել իր մեքենայի տիրապետումից, սակայն նախաքննական մարմինը դատարանի որոշումը մի կողմ է թողել, ու առգրավվում են արցախցիների մեքենաները:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել ոստիկանության լրատվության բաժնի հետ, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան: Ավելի ուշ կհրապարակենք նաեւ ոստիկանության պատասխանը:

ԽՈՒՍԱՓԵԼ Է ՁՈՐԱԿՈՉԻՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հովակիմ Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2020թ. փետրվարի 13-ին կցագրվել է ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանում, որից հետո ենթակա է եղել ՀՀ ՁՈՒ զորակոչման 2022թ. ամառային զորակոչին, սակայն նշված զորակոչի ընթացքում՝ համապատասխան բժշկական հետազոտություններ անցնելուց հետո, նրան ՀՀ ՊՆ կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ տրվել է տարկետում բուժման համար՝ 10 ամիս ժամկետով:

Տարկետման ժամկետը լրանալուց հետո՝ 2023թ. ամառային զորակոչի ընթացքում, ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Գեղարքունիքի մարզի տարածքային ստորաբաժանումից տրված ուղեգրերի հիման վրա, համապատասխան բժշկական հետազոտություններ անցնելուց հետո Հ.Ղազարյանը բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, սակայն հրաժարվել է ստանալ զորակոչման ծանուցագիրը եւ խուսափել է պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված 2023թ. ամառային զորակոչից:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 108 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՃԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿՈՒՄ

Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղի բնակիչների բազմաթիվ խոզեր հիվանդությունից սատկել են, գյուղացիների շատ խոզեր էլ այժմ հիվանդ են. բարեկամավանցիների խոսքերով՝ նրանց սատկելը օրերի հարց է: Բարեկամավանում հաստատված արցախցի ընտանիքներից մեկին բարեգործները մոտ 100 կիլոգրամանոց քաշով մայր խոզ ու դրա 10 խոճկոր են նվիրել: Այդ մայր խոզը հիվանդացել է, անասունի անկման վտանգը մեծ է: Արցախից բռնագաղթած, սահմանամերձ Բարեկամավանում հաստատված արցախցի տղամարդն ասում է, որ իր ընտանիքին նվիրաբերված մայր խոզն ու դրա խոճկորներն են Բարեկամավանում իր ընտանիքի գոյության միակ միջոցը, անասունի սատկելու դեպքում, Արցախում ամեն ինչ զրկված լինելով, հեռավոր Բարեկամավանում զրկվելու են իրենց գոյությանն միակ միջոցից: Բարեկամավանի բնակիչները կասկածում են, որ իրենց խոզերի սատկելու պատճառը խոզերի աֆրիկյան ժատախտ հիվանդությունն է, սակայն պետական իրավասու մարմիններն իրենց այդ մասին ոչինչ չեն հայտնում: Այդ կապակցությամբ զանգահարեցինք Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Վաղարշակ Սուքոյանին: Նա հայտնեց, որ Բարեկամավանում անկած խոզերի մսից փորձանմուշ է վերցրվել, այն ուղարկվել է Երեւան՝ լաբորատոր փորձաքննության, որն էլ կպարզի խոզերի անկման պատճառը: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե, բացի Բարեկամավանից, մարզի որ բնակավայրերում քանի խոզ է վերջերս սատկել, աֆրիկյան ժանտախտը, թե այլ հիվանդություն է խոզերի անկման պատճառը: Մարզպետի պատասխանը դեռ չենք ստացել:

ՃՈԽ ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ ԵՆ

2023 թվականի ընթացքում Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները պետբյուջեից պարգեւատրվել են ընդհանուր 71 միլիոն 960 հազար դրամի չափով: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը չի հրապարակում պարգեւատրումների մասին իր որոշումները, հայտնի չէ, թե մարզպետը, մարզպետարանի որ պաշտոնյան պետբյուջեից քանի հազար դրամ պարգեւավճար է ստացել: Հայտնի չէ նաեւ, թե մարզպետարանի պաշտոնյաները աշխատանքային ինչ նվաճումների համար են ճոխ կերպով պարգեւատրվում: Պարգեւատրումների մասին որոշումները Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում չհրապարակելը մարզպետարանում պարզաբանում են հետեւյալ կերպ. «Պարգեւատրումների վերաբերյալ որոշումները չեն հրապարակվում, քանի որ դրանք պարունակում են աշխատողներին վերաբերող անձնական տվյալներ՝ նրանց եկամուտների մասին»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ՝ ԴԵՂԱՏԱՆԸ

ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, ՀՀ առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանը ֆեյսբուքյան իր էջում անդրադարձել է էլեկտրոնային դեղատոմսերի համակարգի ներդրմանը:

«Չէի կարող անմասն մնալ մի շարք դեղերի՝ դեղատոմսով բաց թողնելու որոշմանը, որը ուժի մեջ է մտել մարտի 1-ից, քանի որ առնվազն 2 անգամ (2018 եւ 2019թթ.) իմ նախաձեռնությամբ է դեռեւս 2017թ. ընդունված այդ որոշումը հետաձգվել մինչեւ մեր առողջապահական համակարգը (թե՛ բուժաշխատողները, թե՛ էլեկտրոնային ենթակառուցվածքները) պատրաստ կլինի այն հնարավորինս սահուն ներդնելուն:

Այն, որ բազմաթիվ դեղեր պետք է դեղատներից բաց թողնվեն միայն դեղատոմսով, շատ հիմնավորված որոշում է, ինչպես աշխարհի շատ երկրներում: Այլ նպատակներից զատ, նման որոշումը երկու հիմնական նպատակ ունի, որպեսզի քաղաքացիները ինքնաբուժումով չզբաղվեն հենց իրենց իսկ վնաս չտալու համար, ինչպես նաեւ հակամիկրոբային (անտիբիոտիկներ) դեղերի չարաշահման պատճառով չունենանք անտիբիոտիկակայուն միկրոբներ, որոնց վրա այլեւս չեն ազդի եղած անտիբիոտիկները:

Միեւնույն ժամանակ չեմ կարող չարձանագրել, որ այս համակարգի ներդրումը կրկին իրականացվեց առանց պատշաճ պատրաստվելու: Բազմաթիվ են ահազանգերը թե՛ մեր քաղաքացիներից, թե՛ բուժհիմնարկներից, թե՛ դեղատներից այնպիսի համակարգային խնդիրների մասին, որոնք թույլ չեն տալիս այս կարեւոր համակարգի ներդրումը համարել սահուն: Խնդիրները թե՛ կանոնակարգային են, թե՛ ենթակառուցվածքային՝

- բազմաթիվ դեղատներ մինչ օրս միացված չեն «ԱՐՄԵԴ» էլեկտրոնային առողջապահության համակարգին, ինչը պետք է արվեր մինչեւ որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը: Դեղատների բուժանձնակազմը, ցանկալի կլիներ, որ անցներ վերապատրաստման դասընթացներ:

- Բազմաթիվ են բողոքները, երբ էլեկտրոնային առողջապահության համակարգը անհասանելի է դառնում բուժաշխատողների եւ դեղատների համար հավանաբար համակարգի սերվերների թողունակության պատճառով: Սերվերները պետք է հզորացվեին մինչեւ համակարգի ներդրումը:

- Բազմաթիվ են ահազանգերը, երբ բժիշկները անհամաչափ շատ ժամանակ են ծախսում մեկ դեղատոմսի դուրսգրման վրա, եւ, հետեւաբար, մեծ հերթեր են գոյանում միայն դեղատոմսի դուրսգրման պատճառով: Դեղատոմսի դուրսգրման համակարգը բուժաշխատողների համար պետք է լիներ հնարավորինս մատչելի (user-friendly), եւ բոլոր բուժաշխատողները պետք է անցնեին վերապատրաստման դասընթացներ՝ դրանից օգտվելու մասին:

- Համակարգը եւ կարգավորումները պետք է հնարավորություն տային բժշկին առանց պացիենտի այցելության դեղատոմս դուրս գրելու, ինչպես աշխարհի շատ երկրներում, որոնք ունեն էլեկտրոնային առողջապահական համակարգեր: Եթե բժիշկը գիտի իր պացիենտի հիվանդությունը, հատկապես՝ քրոնիկ հիվանդությունների դեպքում, ոչ մի խնդիր չի կարող առաջանալ նման դուրսգրումների պատճառով: - Դեղատներից ահազանգեր կան, որ նրանք չունեն հասանելիություն դեղատոմսով դուրս գրվող դեղերի մեկ միասնական ցանկի, որպեսզի առանց ավելորդ ջանք գործադրելու արագ հասկանան՝ ինչպես վարվել: Նաեւ ահազանգեր կան, որ որոշ դեղատոմսով դուրսգրվող դեղեր ներմուծված չեն «ԱՐՄԵԴ» համակարգ:

- Մեծ բաց կա բժշկական գաղտնիքի հասանելիության դեղատան աշխատակիցներին եւ այլ բուժաշխատողներին, երբ պացիենտը շատ դեպքերում չէր ցանկանա 3-րդ անձանց տրամադրել իր այս կամ այն հիվանդության մասին տեղեկատվությունը, բայց, փաստորեն, այս պահին դեղատան աշխատակիցը կարող է տեղեկանալ, թե պացիենտը ինչ հիվանդության համար է գնում այդ դեղը, ինչը պարզապես անթույլատրելի է:

Այլ խնդիրներ էլ կան, բայց սրանք, իմ կարծիքով, ամենակարեւորներն էին, որոնց մասին ինձ տեղեկություններ են հասել: Այս խնդիրները կա՛մ պետք է շատ արագ հասցեագրվեն, կա՛մ համակարգի գործարկումը կրկին պետք է հետաձգել:

Հ.Գ. Այս խնդիրների պատճառով է, որ բազմաթիվ դեղատներ այլ տարբերակ չունեն, քան շարունակել վաճառել դեղատոմսով դուրս գրվող դեղերը առանց դեղատոմսի առկայության, եւ նրանց որեւէ մեկը չի կարող մեղադրել նման գործունեություն իրականացնելու համար, քանի դեռ վերնշյալ եւ շատ այլ հարցեր լուծված չեն»,- գրել նա:

ԱՆԿԼԱՎՆԵՐ

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄՈՏ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ Է

Մարտի 12-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Ադրբեջանի պահանջած 4 գյուղերը՝ Բաղանիս Այրումը, Ներքին Ոսկեպար՝ Աշաղը Աքսիպարա, Խեյրիմլի եւ Ղըզըլհաջիլի, դե յուրե Հայաստանի տարածքում չեն՝ Ալմա-Աթայի հռչակագրի համաձայն: Լրագրող Թաթուլ Հակոբյանն իր ֆեյսբուքյան էջում գրել էր, որ նկատել է, թե ինչպես է այդ հատվածում տեխնիկա աշխատում:

ArmLur.am-ը կապ հաստատեց քաղաքագետ Արմեն Բաղդասարյանի հետ մեկնաբանություն ստանալու նպատակով. «Նիկոլ Փաշինյանը կոպիտ սխալ է թույլ տալիս, որովհետեւ այդ 4 ոչ անկլավային գյուղերը, այո, եղել են Խորհրդային Ադրբեջանի կազմում, բայց այդ նույն խորհրդային սահմանները Ադրբեջանը բազմաթիվ տեղերից հատել է, ներխուժել է Հայաստանի ինքնիշխան տարածք, այսինքն՝ եթե ադրբեջանցիները ասում են, որ խորհրդային սահմաններով մերն է, ուրեմն պիտի ընդունեն նաեւ, որ խորհրդային սահմաններում իրենք ներխուժել են եւ՛ Ջերմուկի ուղղությամբ, եւ՛ Ներքին Հանդի, եւ՛ Գեղարքունիքի ուղղությամբ: Եթե պահանջում են, որ հայկական զորքերը դուրս գան այդ 4 գյուղերից, իրենք էլ պիտի զուգահեռաբար դուրս գան 31 հայկական տարածքներից, եւ Նիկոլ Փաշինյանը պարտավոր էր պնդել դա»: Քաղաքագետի խոսքով՝Նիկոլ Փաշինյանը պատրաստակամություն հայտնեց միակողմանի զիջումներ անել, ընդ որում՝ Ադրբեջանն իր կողմից հայտնել է, որ զիջումներ չի անելու, եւ Ադրբեջանը, օգտվելով դրանից, ոչ միայն ավելի է կոշտացրել իր դիրքորոշումը, այլեւ ռազմավարական դիրքեր է ձեռք բերել Տավուշի ուղղությամբ: Իր կոշտ դիրքորոշումը վկայում է այն մասին, որ նրանք ոչ թե խաղաղություն են ուզում, այլ պատրաստվում են պատերազմի: Մեր Ներքին Ոսկեպարի թղթակիցը պատմում է, որ տեղի բնակիչների մոտ միայն անորոշություն է, տագնապ, տխրություն, սպասում: «Մենք այնտեղ շատ տարածքներ ունենք, որոնք գտնվում են Ադրբեջանի զինուժի վերահսկողության տակ: Դա նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի սկզբնական տարբերակում եղել է այդ գյուղերի վերադարձում, հետաձգեցին, հիմա էլ միանգամից չեն տալիս՝2 մասից են տալիս, այսինքն՝ 4 գյուղ, որոնք անկլավ չեն, հետո մյուս 4 գյուղը, որից 3-ը անկլավ են: Հիմա ճանապարհ է վտանգվել, ու հետո գազատարի խնդիր է առաջանալու, բնակիչների տեղաշարժի խնդիր է առաջացնելու այնտեղ: Այդ տարածքները տալու դեպքում Իջեւան-Բերդ այս գործող ճանապարհը վտանգվելու է»,- ասում է մեր թղթակիցը: Քաղաքագետների կարծիքով՝ Հայաստանում պետք է կառուցվի կամուրջ՝ Կիրանց-Աճարկուտ հատվածում, Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհի Ոսկեպարի հատվածում, առնվազն երկու տեղում փոխվի ուղին եւ մինչեւ 100 մետր քաշվի ՀՀ խորք:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 5 պատահար. 5 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՈՉ ԹԵ ԹԱՆԿ, ԱՅԼ ԷԺԱՆ

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ Զարուհի Աղաջանյանը ֆեյսբուքյան իր էջում ներկայացրել է միասնական տոմսային համակարգի մանրամասները:

Գրառումը ներկայացնում ենք ստորեւ.

«1. Արդյոք պե՞տք էր վերանայել տրանսպորտի սակագինը 30 տարի անց:

Միանշանակ այո՛, քանի որ Երեւանի տրանսպորտային համակարգը այսօր ներառում է ոչ թե գազելներ եւ ռաֆեր, այլ գերմանական եւ չինական արտադրության ավտոբուսներ, տրոլեբուսներ, որոնց տեխնիկական սպասարկման համար նախատեսված ծախսերը տրամաբանորեն այլ են, եւ որոնց քանակը շարունակաբար ավելացվում է եւ արդիականացվում:

2. Արդյոք հաճախակի օգտվող մեր քաղաքացիների համար տրանսպորտի գինը դառնում է 300 դրամ:

Իհարկե ոչ. օրինակ՝ 8800-դրամանոց փաթեթ գնելու դեպքում մեկ ամսվա ընթացքում օրը 2 անգամ օգտվողների համար մեկ ուղեւորության արժեքը դառնում է 146 դրամ, իսկ օրը 4 անգամ օգտվողների համար մեկ ուղեւորության արժեքը դառնում է 73 դրամ, այսինքն՝ ոչ թե թանկանում է, այլ էժանանում:

3. Արդյոք այս համակարգը հեշտացնելո՞ւ է քաղաքում տեղաշարժվելը:

Միանշանակ այո՛, քանզի Ա կետից Բ կետ հասնելու համար քաղաքացին ստիպված չի լինելու երկար սպասել մեկ տրանսպորտի, այլ ունենալու է հնարավորություն տեղփոխով ավելի արագ հասնելու եւ հավելյալ դրա համար չվճարելու, քանի որ գնված փաթեթը տալիս է 30 օր անսահմանափակ երթեւեկելու հնարավորություն: Այս դեպքում լուծվելու է նաեւ որոշ տրանսպորտային գծերի գերծանրաբեռնվածությունը:

4. Արդյոք կա՞ն խմբեր, որոնց համար դժվար է վճարել մեկ ուղեւորության համար 146 դրամ:

Միանշանակ այո՛, եւ այդ պատճառով էլ Երեւանի ավագանին մինչեւ սեպտեմբեր ձեզ է ներկայացնելու այն բոլոր արտոնյալ խմբերի համար նախատեսված փաթեթը, ըստ որի՝ բոլոր այդ թիրախային խմբերը երթեւեկելու են անհամեմատ մատչելի գներով կամ անվճար:

5. Արդյոք հազվադեպ տրանսպորտից օգտվող քաղաքացիները կամ զբոսաշրջիկները պե՞տք է երեւեկեն ավելի թանկ սակագնով:

Միանշանակ այո՛. այսպիսի պրակտիկա է գործում աշխարհի բոլոր երկրներում, եւ այդ հավելյալ գումարները հնարավորություն են տալիս արտոնություններ տրամադրել այն մարդկանց համար, որոնց համար այդ 146 դրամը իրոք բեռ է:

Եվ վերջում հավելեմ՝ տրանսպորտի գինը վերանայվել է 10 տարի անց քաղաքային հաջորդ իշխանություններին նորից կոլապսի առջեւ չկանգնեցնելու, այսօր առկա ստվերը վերացնելու եւ, իհարկե, տրանսպորտային համակարգի զարգացումը շարունակական դարձնելու նպատակով:

Որոշումը ուժի մեջ է մտնելու սեպտեմբերի 1-ից արտոնությունների փաթեթի հետ միասին»:

ՄՏԱՀՈԳԻՉ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՐՈ՞Հ, ԹԵ՞ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Արդեն երկար ժամանակ է, ինչ մի շարք ոչ ցանկալի փոփոխություններ են կատարվում հայ մշակութային կյանքում: Նման ոչ ցանկալի փոփոխություններ են կատարվել դասագրքերում, որոնցից հատկապես մեծ աղմուկ բարձրացրեց նոր տպագրված 5-րդ եւ 7-րդ դասագրքերում կատարված բովանդակային փոփոխությունները: Մշակութային կյանքից, մեկ տարվա համառ պայքարից հետո հեռացվեց «Գոյ» պետական թատրոնը: Պարբերաբար սկսվեց քարկոծվել հայությանը մշտապես միավորող Հայ առաքելական եկեղեցին: Արդեն օրերս էլ սկսվեցին շրջանառվել Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի փակման մասին լուրերը: Ի՞նչ նպատակով են կատարվում նման փոփոխությունները, եւ, ի վերջո, մեր ժամանակներում կատարվող ազգային, գրական ու մշակութային ասպարեզներում կատարվող փոփոխություններն ի՞նչ հետեւանքներ կստեղծեն: ArmLur.am-ը զրուցել է ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, գրող, գրականագետ ու գրաքննադատ Դավիթ Գասպարյանի հետ:

«Ես գիտական ասպարեզի մարդ եմ, ինչպես ասում են, իմ ծննդյան փուչ օրից: Գիտական ոլորտը կարիք ունի նորոգման ու ամրացման: Նորոգման ու ամրացման կարիք ունեն նաեւ հանրային ու մշակութային ոլորտները: Ես մշտապես կողմ եմ եղել ստեղծմանը, բազմացմանը, մեկը երկու դարձնելուն, երկուսը չորս դարձնելուն: Ժողովուրդը այդպես է աճում, բազմանում, ոչ թե կրճատվելով կամ նվազելով: Այդ իսկ պատճառով ես մշտապես կողմ եմ եղել մշակութային վերածննդին, ազգային, գիտական ու նաեւ կրթական վերածննդին, որպեսզի մեր համալսարաններում ուսանողների թիվը չկրճատվի, որպեսզի դպրոցներին հասցեագրված մեր դասագրքերը լինեն որակյալ ու պահանջված: Այսպես մենք կկարողանանք մեզ վերագտնել այս դժվար, շատ դժվար ժամանակներում»,- նշեց գրականագետ Դավիթ Գասպարյանը:

Հիշեցնենք, որ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոսերվատորիան՝ որպես երաժշտական բարձրագույն ուսումնական հիմարկ, ստեղծվել է 1923 թվականին: Կոնսերվատորիայի ազգային դիրքորոշումը հիմնականում պայմանավորվեց հայ երաժշտության պատմությանը, հայ ժողովրդական ստեղծագործությանը, հայկական երաժշտության լադային համակարգին վերաբերող դասընթացների իրագործումով: Կոնսերվատորիայի մասնագիտական առաջընթացին մեծ ազդեցություն է թողել սերտ կապը Մոսկվայի եւ Լենինգրադի կոնսերվատորիաների հետ, ինչպես նաեւ խորհրդային ականավոր երաժիշտների, հատկապես՝Դմիտրի Շոստակովիչի եւ Արամ Խաչատրյանի ստեղծագործական օգնությունը: Կոնսերվատորիան հիմնադրումից մինչեւ 1979 թվականը տվել է 5800-ից ավելի երաժիշտներ, դրանց թվում՝ 5 ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, 22 ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, 35 արվեստի վաստակավոր գործիչ, 37 վաստակավոր արտիստ, 14 միջազգային մրցույթների եւ 7 միութենական մրցույթների դափնեկիրներ:

«ԳՈՅ» թատրոն-ը ստեղծվեց 1988թ. դեկտեմբերի 1-ին՝ Խորեն Աբրահամյանի աջակցությամբ: Ստեղծումից մեկ շաբաթ անց վրա է հասնում Սպիտակի տարերային աղետը, եւ «Գոյ»-ի անձնակազմը եւս շտապում է աղետի գոտի՝ մասնակցելու փրկարարական աշխատանքներին: Երկար փորձություններ հաղթահարելուց հետո՝ 2010 թվականին, «ԳՈՅ» թատրոնը, վերագտնելով իր տեղն ու դերը թատերական աշխարհում, դառնում է պետական թատրոն եւ վերանվանվում «ԳՈՅ» բեմարվեստի ազգային փորձարարական կենտրոն:

Հայոց պատմության ողջ ընթացքում անուրանալի տեղ է ունեցել Հայ առաքելական եկեղեցին, որն այսօր, ցավոք, որոշ խմբերի կողմից քարկոծվում է եւ մոռացության մատնվում: Հայ առաքելական եկեղեցին աշխարհում սփռված ողջ հայերի համար մշտապես միավորող օղակ է հանդիսացել եւ դարեր շարունակ իր առաջատար դերն ունեցել ազգային, քաղաքական կյանքում: Շատ հաճախ էլ եկեղեցին փրկության ճրագ է հանդիսացել հայոց պետականության ձեւավորման ու պահպանման գործում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓԱԹԵԹ

ՆՈՐ ՖՈՒՖԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովը մարտի 13-ի նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկել է «ՀՀ ջրային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» եւ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը, որը ներկայացրել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Տիգրան Գաբրիելյանը:

Ակնկալվում է, որ նախագծերի ընդունմամբ կկանխվի ստորերկրյա ջրային ռեսուրսներից ապօրինի ջրօգտագործումը, այդ նպատակով հորատումը կամ լուծարված կամ կոնսերվացված հորատանցքերի վերաբացումը, ջրօգտագործման թույլտվությամբ տրված պայմանների խախտմամբ ջրառ իրականացնելը: Կկիրառվի մակերեւութային եւ ստորերկրյա ջրային ռեսուրսներից ապօրինի ջրօգտագործման դեպքերի համար տարբերակված վարչական եւ քրեական պատասխանատվություն՝ ստորերկրյա ջրային ռեսուրսներն առավելագույնս պահպանելու նպատակով: Օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը կնպաստի Սեւանա լճի էկոլոգիական հավասարակշռության վիճակի բարելավմանը, լճի եւ դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի կենսաբազմազանության պահպանություն եւ կենսապաշարների կայուն օգտագործման բարելավմանը, սիգի կայուն զանգվածի պահպանմանը, արդյունագործական որսի իրականացմանը: Մասնավորապես՝ սիգ ձկնատեսակի ապօրինի որսի կամ ապօրինի արդյունահանման համար վնասի խոշոր չափ է համարվել 150.000 ՀՀ դրամը գերազանցող գումարը:

Մտքերի փոխանակության ընթացքում հանձնաժողովի անդամները մտահոգություն են հայտնել ջրի կորուստների կապակցությամբ, ներկայացրել առաջարկներ՝ ուղղված ջրային ռեսուրսների պահպանությանը:

Հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել օրենսդրական փաթեթին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ ՀԱՆԴԵՐՁԱՆՔ

ԼՈՒՌ ԵՎ ԽՈՀԵՄ ՇՔԵՂՈՒԹՅԱՄԲ

Դարեր ի վեր Հայ առաքելական սուրբ եկեղեցին իր մեծ ավանդն է ունեցել հայ իրականության, պետականության կերտման, մշակույթի պահպանման եւ արժեքների ձեւավորման հարցում:

Այն իր ուրույն ներդրումն ունի հայ ազգային ազատագրական պայքարներում, առաջին (1918) եւ երկրորդ հանրապետությունների (1991) հիմնադրման, ինչպես նաեւ արցախյան երեք պատերազմների ընթացքում հայրենիքի պաշտպանության գործում:

Հայ առաքելական եկեղեցին մեծ ավանդ ունի հատկապես հայ մշակույթի, գիտության եւ կրթության ոլորտների զանգացման գործում, որից զատ առանձնանում է նաեւ հենց Հայ եկեղեցու մշակույթն ու ավանդությունը: Այն առանձնանում է նաեւ իր լուռ եւ խոհեմ շքեղությամբ ու «արտաքին տեսքով»:

Խոսելով եկեղեցու «դեմքի» մասին՝ պետք է նշել, որ կարեւոր տեղ է զբաղեցնում հայ հոգեւորականի արտաքին տեսքը՝ հանդերձանքը:

Եկեղեցականները՝ դպիրից մինչեւ կաթողիկոս, թե՛ սրբազան արարողությունների ժամանակ եւ թե՛ առօրյա կյանքում կրում են իրենց աստիճանին եւ արարողությանը համապատասխան զգեստներ: Եկեղեցական զգեստները առօրյա աշխարհիկ հագուստից սկսել են տարբերվել միայն 4-րդ դարում, երբ քրիստոնեությունը դարձել է ազատ կրոն: Ավանդության համաձայն՝ հայ եկեղեցու սպասավորների զգեստները մինչեւ 12-13-րդ դարերը եղել են շատ պարզ, ապա ձեւավորվել Կեսարիայի եւ Երուսաղեմի եկեղեցիների զգեստների հիման վրա՝ հարմարեցվելով հայ եկեղեցուն եւ հայ մշակույթին: Հատկանշական է, որ, ի տարբերություն այլ եկեղեցիների, Հայ առաքելական եկեղեցու սպասավորները զգեստների հարցում գույնի սահմանափակում չունեն, սակայն դրանց ճոխությունը կախված է դրանց կիրառման բնույթից:

Եկեղեցական զգեստները մինչ գործածվելը օրհնվում են, քանի որ պետք է ծառայեն նվիրական, սուրբ նպատակի համար: Կան երկու տեսակի զգեստներ՝ ընդհանուր զգեստներ, որոնք կրում են առօրյա եկեղեցական կենցաղում, եւ աստվածապաշտական զգեստներ, որոնք կրում են ծիսակատարությունների ժամանակ:

Ընդհանուր զգեստի մաս են կազմում սքեմը, վեղարը եւ փիլոնը: Սքեմը կրում են եկեղեցու բոլոր սպասավորները՝ սարկավագից մինչեւ կաթողիկոս: Այն ամենօրյա հանդերձանք է, որը կոչվում է վերարկու կամ սքեմ եւ կարվում է սեւ պարզ կտորից: Վեղարը կուսակրոն հոգեւորականների զգեստի գլխադիրն է, որով նրանք տարբերվում են ամուսնացյալ քահանաներից: Ենթադրվում է, որ վեղարը գործածության մեջ է մտել 11-րդ դարից հետո, քանի որ մինչ այդ այն մատենագրության մեջ չի հիշատակվում: Առանձնահատուկ է Ամենայն հայոց կաթողիկոսի վեղարը, որի ճակատային հատվածում ադամանդակուռ խաչ կա: Ամենօրյա զգեստին մաս է կազմում նաեւ փիլոնը, որը մարմինը փաթաթող եւ կրծքի վրա ճարմանդով ամրացվող սեւ կտավե զգեստ է: Այն գործածվում է ժամերգությունների եւ արարողությունների ժամանակ: Ծայրագույն վարդապետները եւ եպիսկոպոսները, այդ թվում՝ կաթողիկոսը, որպես պատվո նշան, կրում են մանուշակագույն ծաղկյա, իսկ վարդապետները՝ սեւ ծաղկյա փիլոններ: Հայրապետական կոնդակով սեւ ծաղկյա փիլոնները, որպես պատվո նշան, շնորհվում են նաեւ ավագ քահանաներին:

Դպիրների, կիսասարկավագների եւ սարկավագների համար աստվածապաշտական զգեստի մաս են կազմում շապիկը՝ մինչեւ կոշիկները հասնող զգեստը, ուրարը՝ 3 մետր երկարությամբ գունավոր եւ ծաղկավոր երիզը, որը կրում են ձախ ուսին, եւ խորհրդանշում է սպասավորի կարգավիճակը՝ նա դեռեւս ամբողջությամբ Աստծո լուծն իր վրա կրելու պատրաստ չէ, եւ բազկուրարը, որը ուրարի փոքր տարբերակն է՝ նախատեսված ձախ դաստակին կրելու համար:

Քահանայի, եպիսկոպոսի եւ կաթողիկոսի զգեստներին մաս են կազմում հողաթափը, որը Սուրբ Պատարագի ժամանակ խորան բարձրանալիս կրում են թե՛ պատարագիչը եւ թե՛ խորհրդակատարության ժամանակ նրան սպասարկող խոնարհ դասի աստիճանավորները, սաղավարտը, որը Հիսուս Քրիստոսի կրած փշե պսակը խորհրդանշող գլխանոցն է, շապիկը, փորուրարը, գոտին, թաշկինակը, բազպանները, վակասը եւ շուրջառը, որը հանդերձանքն ամբողջացնող անթեւ վերարկու է. այն կրծքի վրա ամրանում է մետաղե զույգ ճարմանդով:

Եպիսկոպոսները, քահանայական զգեստներից բացի, սաղավարտի փոխարեն կրում են խույր կամ թագ, արտախուրակներ, որոնք խույրի ետեւից իջնող ծոպեր են, եմիփորոն՝ լայն ուրար եւ գավազան:

Հայրապետական զգեստը, որով այն առանձնանում է մյուս սպասավորների զգեստներից, ներառում է կոնքեռ: Այն ասեղնագործ, խաչակիր ոսկեթել զարդ է, որը կախվում է հայրապետի գոտուց:

Զգեստին մաս կազմող նվիրական առարկաներից է մատանին, որը նորընծա եպիսկոպոսին տրվում է ձեռնադրության ժամանակ. այն իշխանության նշան է, որը կրում են աջ ձեռքի ճկույթ մատին, իսկ կաթողիկոսը՝ աջ ձեռքի մատնեմատին: Նվիրական առարկաներից են լանջախաչն ու պանակեն, որոնցից վերջինս կրում են միայն կուսակրոն հոգեւորականները, եւ Ձեռաց խաչը, որը հոգեւորականները օգտագործում են արարողությունների եւ ծիսակատարությունների ժամանակ:

Հոգեւորականների զգեստներն իրենց տեսքով, ասեղնագործությամբ եւ գույներով գրեթե կրկնում են հայ մանրանկարչությունում ու ճարտարապետությունում առկա նախշերն ու գույները: Դրանք շարունակում են հմայք հաղորդել Հայ եկեղեցուն եւ հոգեւոր մեծ ազդեցություն թողնել հավատավոր ժողովրդի շրջանում:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐՔԱԿԱՆ

ԳՈՀ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ

Հայաստանի մարմնամարզության տղամարդկանց թիմի գլխավոր մարզիչ Հակոբ Սերոբյանը գոհ է ներքին առաջնության արդյունքներից:

«Ընդհանուր առմամբ, Հայաստանի այս առաջնությունը տարբերվում էր մյուսներից: Երիտասարդների առաջ դրված խնդիրն այլ էր: Նրանցից մի քանիսը՝ Համլետ Մանուկյանը եւ Մամիկոն Խաչատրյանը, վնասվածքներ ունեն, սակայն պատրաստվում են ապրիլին կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Երիտասարդների պայքարում մրցակցություն կար, ինչի շնորհիվ ընտրեցինք հավաքականի 4-րդ անդամին՝ Շեքսպիր Գեւորգյանին»,- լրագրողների հետ զրույցում ասաց Սերոբյանը:

Վերջինիս խոսքով՝ աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր Արթուր Դավթյանի հենացատկի վարժությունը նույնությամբ կրկնելու դեպքում նրան հաջողություն է սպասվում առաջիկա մրցաշարերում՝ Եվրոպայի առաջնություն եւ աշխարհի գավաթի խաղարկություն:

Հայաստանի մարմնամարզության հավաքականը ապրիլին կմասնակցի աշխարհի գավաթի խաղարկության 4-րդ փուլին եւ Իտալիայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:

Ալբերտ Ազարյանի անվան մարզադպրոցում կայացած առաջնության մրցումային վերջին օրը կայացան առանձին գործիքների եզրափակիչները: Տղամարդկանց մրցաշարում Հայաստանի չեմպիոններն են Գագիկ Խաչիկյանը (նժույգ-թափեր), Գագիկ Խաչատրյանը (ազատ վարժություններ), Վահագն Դավթյանը (օղակներ), Էրիկ Բաղդասարյանը (զուգափայտ), Արթուր Դավթյանը (հենացատկ), Շեքսպիր Գեւորգյանը (պտտաձող): Կանանց մրցումներում լավագույններն են Աննա Մանթաշյանը (հավասարակշռության գերան, ազատ վարժություններ), Օֆելյա Քոչարյանը (հենացատկ) եւ Մանե Պողոսյանը (զուգափայտ): Բազմամարտում Հայաստանի չեմպիոնները Գագիկ Խաչիկյանը եւ Նանե Միքայելյանն են:

ՈՒՂԵԳՐԵՐ ԵՆ ՆՎԱՃԵԼ

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչի հերթական ուղեգրերը նվաճել են «Բարսելոնա»-ն եւ «Արսենալ»-ը:

Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակչում «Բարսելոնա»-ն «Նապոլի»-ի հետ մրցապայքարում առավելության հասավ 3:1 հաշվով: Կատալոնական ակումբի կազմում աչքի ընկան Ֆերմին Լոպես Մարտինը, Ժոաու Կանսելուն եւ Ռոբերտ Լեւանդովսկին, իսկ «Նապոլի»-ից գոլը խփեց Ամիր Ռահմանին: «Բարսելոնա»-ն շարունակում է պայքարը Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչում:

Օրվա մյուս խաղում «Արսենալ»-ը Լոնդոնում ընդունեց «Պորտու»-ին եւ առավելության հասավ նվազագույն հաշվով: «Ձինագործների» կազմում միակ գոլը խփեց Լեանդրո Տրոսարդը: «Արսենալ»-ը վերջին 14 տարվա մեջ առաջին անգամ Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակչում է:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ-120

ՆՈՐ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը եւ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն Ազգային արխիվի նորաբաց ցուցասրահում ներկա են գտնվել Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված ցուցադրության բացմանը:

Ցուցադրության ընթացքում ներկայացվել են ինչպես Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում պահպանվող Արամ Խաչատրյանի կյանքի եւ գործունեության վերաբերյալ նորահայտ արխիվային փաստաթղթերը, այնպես էլ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանից բերված մեծանուն կոմպոզիտորի անձնական իրերը:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Սիրվարդ Գեւորգյանը, Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Արթուր Ստեփանյանը, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը եւ այլ հյուրեր:

●Մարտի 16-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Ռապունցելը» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է կատարվում աշխատանքային կենսաթոշակի չափի հաշվարկումը:

Աննա Գրիգորյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի եւ կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է:

Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի եւ կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

Մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է Կ=Հ+ (Ս X Ա) X Գ բանաձեւով, իսկ 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Կ=Հ+ (10 X Ա+(Ս-10) X Ա1) X Գ բանաձեւով, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,

Ա-ն՝ մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Ա1-ը՝ 10 տարին գերազանցող աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակառուի անձնական գործակիցը սահմանվում է՝

1) մինչեւ 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,1,

2) 11-ից մինչեւ 40 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,01,

3) 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,02:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկվում է՝

ա) մինչեւ 10 տարվա (ներառյալ) ստաժի առկայության դեպքում՝ Գ=0,1 X Ս բանաձեւով,

բ) 11-ից մինչեւ 40 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ=1+0,01 X (Ս-10) բանաձեւով,

գ) 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ=1.3+0,02 X (Ս-40) բանաձեւով:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը չի կարող գերազանցել 2-ը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չվճարված գումարը վճարելը ինչպե՞ս է կատարվում:

Լալա Անտոնյան (41 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող անձին չվճարված նպաստի գումարը վճարվում է դիմելու կամ նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը նպաստ ստանալու իրավունք է ունեցել:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամին՝ եթե նա, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում): Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է նաեւ նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան (UWW) հրապարակել է ազատ ոճի աշխարհի լավագույնների դասակարգման նոր աղյուսակը:

Այնտեղ ընդգրկվել է նաեւ հայաստանցի 3 մարզիկ:

Արսեն Հարությունյանը երկրորդ տեղում է 57 կգ քաշայինների շարքում:

Նրա թիմակիցներ Վազգեն Թեւանյանը լավագույնն է 65 կգ, իսկ Արման Անդրեասյանը՝ 70 կգ քաշայինների վարկանիշային սանդղակում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝ (060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 4 - 7 + 4 + 9
	Կոտայքի լեռներ	- 8 - 10 + 5 + 8
	Կոտայքի նախալեռներ	- 5 - 8 +10 + 13
	Գեղարքունիք	- 8 - 13 + 3 + 6
	Լոռի	- 6 - 10 + 8 + 10
	Տավուշ	- 4 - 7 + 8 + 11
	Արագածոտնի լեռներ	- 8 - 12 + 3 + 6
	Արագածոտնի նախալեռներ	- 5 - 7 + 8 + 11

	Արարատ	- 4 - 7 +11 + 13
	Արմավիր	- 4 - 8 +10 + 13
	Վայոց ձորի լեռներ	- 3 - 7 + 3 + 6
	Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 7 +10 + 13
	Սյունիքի հովիտներ	- 4 - 7 +11 + 14
	Սյունիքի նախալեռներ	- 9 - 13 + 7 + 10
	ԼՂՀ	- 9 - 10 + 7 + 10
	Երեւան	2 - 4 + 9 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*